2024 Թ-ի ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հիմք ընդունելով <<Բյուջետային համակարգի մասին օրենքի>> 35-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջի ներկայացնում ենք Արենի համայնքի 2024թ-ի բյուջեի հաշվետվության վերլուծության եզրակացությունը ստորև՝

Եկամտային մաս.

Եկամտային մասի այն հոդվածները, որոնք կատարվել են 101 և ավելի տոկոսով, բնականաբար ողջունելի է, անդրադառնանք այն հոդվածներին, որոնց գծով պլաններն այս կամ այն կերպ չեն կատարվել՝

1. Գույքահարկի գծով – 95,2 %, որը պայմանավորված է տրամադրվող արտոնությունների հետ

2.Գույքի վարձակալությունից 99.2 % տրամադրվող արտոնությունների հետ

Այնուհանդերձ միջին թվաբանական հաշվարկով բյուջեի եկամտային մասի պլանը կատարվել է 101 %-ով, իսկ սեփական եկամուտների հավաքագումը կատարվել է 106,3%-ով:

Ծախսային մաս.

Դրամով վճարվող աշխատավարձերն ու հավելավճարները, պարգևատրումները, գործառնական և բանկային ծառայությունների ծախսերը, էներգետիկ, կոմունալ, կապի ծառայությունները, ապահովագրական ծախսերը, գործուղումների և շրջագայությունների ծախսերը կատարվել են հիմնականում առանց պլաններից էական շեղումների՝ ապահովվել է 0.6% խնայողություն: Սուբսիդիաների և դրամաշնորհների հետ կապված ծախսերի նախատեսված և կատարողական ցուցանիշների տարբերությունը կազմե է՝ 7823,5 հազ դրամ, ըստ որի կատաման տոկոսը կազմել է 93 %: Շենքերի և շինությունների շինարարության, կապիտալ վերանորոգման գծով պլանավորված գումարը եղել է՝ 585765,6 հազ ՀՀ դրամ, փաստացի կատարվել է 542107,0 հազ. ՀՀ դրամ,կամ 92,5%:

Սուբվենցիոն ծրագրերի իրականացման շրջանակներում, 2024 թվականին իրականցվել է սոբվենցիոն 15 ենթածրագրեր, որից 3-ը շարունակվում է 2025 թվականին:

GIZ Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության կողմից տրամադրվել է պաշտոնական դրամշնորհ՝ 16900.0 հազ դրամ, Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի մարզադահլիճի վերանորոգման համար, ինչի արդյունքում Աղավնաձոր բնակավայրը ունի վերանորոգնած մարզադահլիճ:

Համայնքին պետության կողմից հատկացվել է սուբվենցիա, որպես անհատույց և անվերադարձ կարգով տրվող դրամական միջոց՝ 359871,1 հազ. ՀՀ դրամ, որն ուղղվել է համայնքի կողմից իրականացվող առանձին նպատակային ծախսատեսակի (ծրագրի) կատարմանը

Պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե է հատկացվել՝ 74782,5 հազ ՀՀ դրամ, որի նպատակն է եղել այն ուղղելու համայնքում տնտեսական, սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի համաֆինանսավորմանը և 53525,0 հազ ՀՀ դրամ հատկացվել է վարչական բյուջե:

Հողի իրացումից մուտքերը փաստացի կազմել են 135927,6 հազ. ՀՀ դրամ:

2024 թվականի Արենի համայնքի բյուջեն՝ եկամուտների պլանը, ծախսերի կատարման նախահաշիվները, ժամանակացույցերը, գնման պայմանագրերից արտահանած քաղվածքները, պլանային թվերի նկատմամբ փաստացի դրամական հոսքերը (եկամուտների և ծախսերի կատարողական), բյուջետային հաշվետվությունները տեղադրված են համայնքի կառավարման տեղեկատվական հարթակում՝ համայնքի բյուջե բաժնում: Վարձակալական պայմանագրերը, անշարժ և շարժական գույքերի պարտավորությունները, տեղական տուրքերի հաշվեգրումներն ու վճարումները՝ համապատասխանաբար գույքի կառավարման և թույլտվություններ բաժիններում:

Համայնքի ավագանու անդամներ՝